



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 10/20**

04.08.2020թ.

ք. Երևան

Քաղաքացի Տիրուհի Այվազյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ Սահմանադրական դատարան) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի՝ ՀՀ սահմանադրությանը (այսուհետ՝ Սահմանադրություն) համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին այնքանով, որքանով չի ապահովվում նոր Երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման հնարավորություն, այն դեպքում, երբ քրեական գործի շրջանակներում հաստատվել է փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելու փաստը, հանցագործության համար մեղադրվող անձն ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը, և գուտ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով կարճվել է քրեական գործը և վաղեմության ժամկետը ավարտված լինելու հիմքով առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացություն տալու հիմքեր:

Ըստ Դիմողի՝ վիճարկվող իրավանորմը բավարար չափով և հստակությամբ չի ծառայում արդար դատաքննությանը, քանի որ չի նախատեսում քրեական գործով հաստատված և անձի կողմից իրեն առաջադրված մեղադրանքն ընդունած, կեղծ ապացույցների հիման վրա կայացված դատական ակտի վերանայման երաշխիքներ: Մասնավորապես, դատական ակտի վերանայման ինստիտուտի ներդրումն ուղղված է կեղծ, անարժանահավատ ապացույցների հիմքով կայացված դատական ակտի վերացմանը և դատավարության մասնակիցների իրավունքների վերականգնմանը: Քաղաքացիական արդարադատությունն իրականացվում է մարդու կողմից, որին բնութագրական է սխալվելը, և միշտ չէ, որ դատավարությունը կարող է ավարտվել օրինական և հիմնավորված դատական ակտի կայացմամբ:

Արդար դատաքննության իրավունքը կկրի ընդամենը հռչակագրային բնույթ, եթե ապահովված չլինի դատական ակտի վերանայման հնարավորության ընթացակարգ, այն դեպքում, երբ դատական ակտի կայացման հիմք հանդիսացող ապացույցը ճանաչվել է կեղծ:

Վիճարկվող նորմն ապացույցի կեղծ լինելու փաստը պայմանավորում է միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով, ինչը չի բխում անձի արդար դատաքննության իրավունքից, քանի որ ապացույցի կեղծ լինելը կարող է հաստատվել ոչ միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով, այլ նաև քննիչի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ:

Մասնավորապես, կարող է լինել դեպք, երբ կեղծ ապացույցից տուժած անձն ապացույցի կեղծ լինելու փաստն ապացուցելու համար ձեռնարկում է իրենից կախված բոլոր միջոցները, այդ թվում՝ հաղորդում է ներկայացնում ոստիկանություն, սակայն օրենսդրական կարգավորումներից և ապացույց կեղծելու մեջ մեղադրվող անձի կողմից իր մեղքն ընդունելու և վաղեմության ժամկետն անցնելու հիմքով գործի վարույթը կարճվում է, և քրեական գործը չի ավարտվում դատավճռով, այլ ավարտվում է քննիչի՝ քրեական գործի վարույթը կարճելու և հետապնդում չանցկացնելու մասին որոշմամբ, որով հաստատվում է ապացույցի կամ փորձագիտական եզրակացության կեղծ լինելու հանգամանքը:

Այսինքն՝ ստացվում է, որ քրեական գործի շրջանակներում քննիչի որոշմամբ, որն ընդունելի է մեղադրվող անձի համար, հաստատվում է քաղաքացիական գործի շրջանակներում դատական ակտի կայացման համար հիմք հանդիսացող ապացույցի կեղծ լինելու հանգամանքը, սակայն անօրինական ապացույց լինելու հիմքով կայացված դատական ակտը շարունակելու է գործել և անբարենպաստ հետևանքներ առաջացնել այդ դատական ակտից տուժած անձի համար:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմը ամբողջությամբ չի ծառայում արդարադատության իրականացմանը և արդար դատաքննության իրավունքին, քանի որ օրենսդիրը երաշխավորում է անօրինական ապացույցի հիման վրա կայացված դատական ակտի օրինականությունը, ինչն անհամատեղելի է Սահմանադրության 61-րդ հոդվածի հետ:

### **ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին այնքանով, որքանով չի ապահովվում դատական ակտի վերանայման հնարավորություն մեղադրվող անձի կողմից ապացույց կեղծելու մեջ մեղսագրվող արարքն ընդունելու և վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման շրջանակներում:

Վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի բովանդակությունը հետևյալն է.

*1. Նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝*

1) բողոք բերած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները գոյություն են ունեցել գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի սուտ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը, գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն.

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրության 61-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում: Նշված որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ

հողվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրություններով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛

իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեգիտիմ ակնկալիքով:

Անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտին՝ Սահմանադրական դատարանը 2012 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ ՄԴՈ-1049 որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «8. Վերոշարադրյալը նկատի ունենալով՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթը կարող է ապահովել այդ վարույթի սահմանադրաիրավական նպատակի ու խնդիրների իրացումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի (ներկայիս՝ 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բովանդակությունը նույնն է՝ Գ. Կ.) և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 2, 3 և 4-րդ կետերի հետևյալ սահմանադրաիրավական բովանդակության պարագայում.

ա) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետում «այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն» բառակապակցությունը նշանակում է, որ նոր երևան եկած հանգամանքները հաշվի առնելու դեպքում տվյալ գործով կկայացվեր այլ դատական ակտ, քան կայացված դատական ակտն է, կամ որ նույնն է՝ նոր երևան

եկած հանգամանքները հաշվի չառնելու դեպքում տվյալ գործի հիմքում կդրվի ու կշարունակի մնալ այնպիսի փաստարկ, որը հայտնաբերված չէր կամ չէր կարող հայտնաբերված լինել ավելի վաղ,

բ) վերանայման բողոքում նոր երևան եկած հանգամանքի շարադրանքի և նոր երևան եկած հանգամանքը հաստատող ապացույցի առկայությունը, ի լրումն բողոքին ներկայացվող մյուս վավերապայմանների առկայության, բավարար հիմք է վերանայման վարույթ հարուցելու համար,

գ) վերանայման բողոք ներկայացնող անձը պարտավոր է ապացուցել նոր երևան եկած հանգամանքը գործին մասնակցած անձանց հայտնի չլինելը, կամ հայտնի լինելու դեպքում նոր երևան եկած հանգամանքը նրանցից անկախ պատճառներով դատարան չներկայացվելը և նոր երևան եկած հանգամանքի՝ գործի լուծման համար էական նշանակություն ունենալը բացառապես հարուցված վերանայման վարույթի շրջանակներում,

դ) վերանայման պահանջը կարող է մերժվել, եթե բողոքի քննության արդյունքներով պարզվում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ դատական ակտը վերանայելու համար հիմք չէ, այսինքն՝ այդ հանգամանքը տվյալ դեպքում նոր երևան եկած հանգամանք չի հանդիսանում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները հաշվի չառնելու դեպքում,

ե) եթե հարուցված վերանայման վարույթի շրջանակներում հաստատվում է նոր երևան եկած հանգամանքի առկայության փաստը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները հաշվի առնելով, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն համապատասխան դատական ակտերը:»:

Իսկ 2015 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՈ-1222 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «6. Ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ինստիտուտի, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով, որպես մարդու խախտված իրավունքները ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին համապատասխան արդար և արդյունավետ դատաքննությամբ վերականգնելու բացառիկ արդարադատական միջոցի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, դրա միակերպ ընկալման ու կիրառման խնդիրներին ՀՀ սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-701, ՍԴՈ-709, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-872, ՍԴՈ-935, ՍԴՈ-1049, ՍԴՈ-1114 և այլն): Դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները, ելնելով սույն գործով քննության առարկա իրավակարգավորման շրջանակներից, հանգեցնում են ելակետային նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումներին.

– նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումն իրավական լուրջ երաշխիք է անձի խախտված իրավունքները վերականգնելու, դատական սխալներն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ,

– այդ հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ չնայած օբյեկտիվորեն գոյություն են ունեցել գործով վերջնական դատական ակտի կայացման պահին, սակայն հայտնի չէին և(կամ) չէին կարող հայտնի լինել թե՛ գործին մասնակցող անձանց և թե՛ դատարանին, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կամ որոշ դեպքերում (ՀՀ քաղ. դատ. օր. 204.32–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ կետ)՝ նորահայտ են,

– իրավասու անձի կողմից որպես նոր երևան եկած հանգամանքներ դատարան ներկայացված հիմնավորումները (տեղեկությունները, փաստարկները) առիթ են ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը պատշաճ իրավական ընթացակարգով ուսումնասիրելու և իրավական անհրաժեշտ հիմնավորումների (ապացույցների) առկայության (այդ հանգամանքները որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող գնահատվելու) դեպքում հիմք են դատական ակտը վերանայելու (բեկանելու և գործն իրավասու դատարանի նոր քննությանն ուղարկելու) համար, այսինքն՝ այդպիսի քննության շրջանակներում իրավասու դատարանը նաև պետք է որոշի, թե որքանով են ներկայացված հանգամանքներն ազդել քննության առարկա գործի ելքի վրա և ինչպես պետք է վերականգնվեն անձի հնարավոր խախտված իրավունքները,

– դատավարական (քրեական, քաղաքացիական) օրենսդրությամբ օբյեկտիվորեն սահմանված չէ որպես «նոր երևան եկած» գնահատելի հանգամանք հանդիսացող փաստարկների, տեղեկությունների, ապացույցների սպառիչ անվանական ցանկը, ինչը յուրաքանչյուր գործով շահագրգիռ անձի կողմից այդպիսիք ներկայացվելու դեպքում դատարանի գնահատման (որոշման) խնդիրն է, միաժամանակ, օրենսդրության խնդիրն է չբացառել որպես «նոր երևան եկած» իրավաբանորեն գնահատելի որևէ հանգամանքի՝ իրավասու դատարանում քննության հնարավորությունը, եթե դրա՝ դատական ակտի հիմքում օբյեկտիվորեն հաշվի չառնելը հանգեցրել է անիրավաչափ, անհիմն որոշման կայացմանը, հետևաբար՝ նաև անձի իրավունքների խախտմանը,

– ուժի մեջ մտած դատական ակտը՝ վկայակոչված այս կամ այն (նախապես հայտնի կամ անհայտ) հանգամանքի հիմքով վերանայելու անհրաժեշտության իրավական հիմնավորման (ապացուցման) պարտականությունը կրում է այդպիսի վերանայում նախաձեռնած անձը,

– ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը՝ նոր երևան եկած հանգամանքներով, կատարվում է դատավարական համապատասխան ընթացակարգով, որի շրջանակներում իրավասու դատարանը կոչված է լուծելու արդարադատական հետևյալ հիմնական խնդիրները. գործով կայացված որոշման հիմքում չարտացոլված և նոր երևան եկած փաստական հանգամանքների (ապացույցների) ուսումնասիրում, իրավագնահատում և իրավական վեճի լուծման համար օրենսդրության համապատասխան նորմերի ընտրություն, դրանց մեկնաբանում ու կիրառում, որոնց հաջորդում են պարտադիր իրավական հետևանքներ, այդ թվում՝ անձի իրավունքների պաշտպանության հետ կապված»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մաս 1-ին կետի և Սահմանադրական դատարանի՝ նոր երևան եկած հանգամանքների վերաբերյալ արձանագրած դիրքորոշումներից ելնելով՝ հանգում ենք հետևյալին.

Նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք բերած անձն ապացուցում է, որ.

- այդ հանգամանքները գոյություն են ունեցել գործի լուծման պահին,

- հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին,

- այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Օրենսդրությամբ օբյեկտիվորեն սահմանված չէ որպես «նոր երևան եկած» գնահատելի հանգամանք հանդիսացող փաստարկների, տեղեկությունների, ապացույցների սպառիչ անվանական ցանկը, ինչը յուրաքանչյուր գործով շահագրգիռ անձի կողմից այդպիսիք ներկայացվելու դեպքում դատարանի գնահատման (որոշման) խնդիրն է, միաժամանակ, օրենսդրությամբ չի բացառվում «նոր երևան եկած» իրավաբանորեն գնահատելի որևէ հանգամանքի՝ իրավասու դատարանում քննության հնարավորությունը, եթե դրա՝ դատական ակտի հիմքում օբյեկտիվորեն հաշվի չառնելը հանգեցրել է անիրավաչափ, անհիմն որոշման կայացմանը, հետևաբար՝ նաև անձի իրավունքների խախտմանը:

Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մաս 1-ին կետով «նոր երևան եկած հանգամանքներ» եզրույթի տակ ներառել է բոլոր այն դեպքերը (փաստարկները, տեղեկությունները, ապացույցները), որոնք ներառված չեն նույն հոդվածի նույն մասի 2-րդ և 3-րդ կետերում: Նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում բողոք բերած անձի վրա է դրված պարտականությունն ապացուցելու, որ այդ հանգամանքները գոյություն են ունեցել գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել իրեն ու դատարանին, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն: Իրավասու անձի կողմից որպես նոր երևան եկած հանգամանքներ դատարան ներկայացված հիմնավորումները (տեղեկությունները, փաստարկները) առիթ են ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը պատշաճ իրավական ընթացակարգով ուսումնասիրելու և իրավական անհրաժեշտ հիմնավորումների (ապացույցների) առկայության (այդ հանգամանքները որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող գնահատվելու) դեպքում հիմք են դատական ակտը վերանայելու համար:

Դատական պաշտպանության իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու



պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 61-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, արդար դատաքննության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից անհանգստանալու է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

Ուսումնասիրելով սույն գործով ներկայացված դիմումին կից փաստաթղթերը՝ անհաժեշտ ենք համարում անդրադառնալ թիվ ԿԴ1/1809/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 27.12.2019թ. կայացված որոշմանը:

Այսպես, դիմելով դատարան՝ Վաղարշակ Վարդանյանը պահանջել է բնեղենով առանձնացնել իր և Տիրուհի Այվազյանի համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված գույք հանդիսացող Կոտայքի մարզի Առինջ գյուղի թիվ 20 փողոցի 12-րդ տանն առկա ողջ գույքի 1/2 մասը, իսկ անհնարինության դեպքում վճարել նշված գույքի արժեքի 1/2 մասը և ճանաչել Վաղարշակ Վարդանյանի սեփականության իրավունքը համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռքբերված գույքի նկատմամբ: ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.10.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.04.2018 թվականի որոշմամբ Տիրուհի Այվազյանի վերաքննիչ բողոքը մերժվել է: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 25.07.2018 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 19.04.2018 թվականի որոշման դեմ Տիրուհի Այվազյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

19.07.2018թ. Տիրուհի Այվազյանը հաղորդում ներկայացրել է ՀՀ ոստիկանության Կոտայքի բաժին՝ հայտնելով, որ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.10.2017թ. վճռի հիմքում դրված «Վարմուն Ռիելթի» ՍՊ ընկերության կողմից 10.04.2017թ. տրված թիվ 088-02/Վ-017 փորձագետի եզրակացությունը ակնհայտ կեղծ է: Դեպքի առթիվ 18.08.2018թ. հարուցվել է թիվ 20192518 քրեական գործը: 18.06.2019թ. որոշում է կայացվել քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին: Նշված որոշմամբ հաստատվել է, որ «Վարմուն Ռիելթի» ՍՊ ընկերության փորձագետի կողմից 10.04.2017թ. տրված և թիվ ԿԴ1/1809/02/16 քաղաքացիական գործով 13.10.2017թ. վճռի հիմքում դրված թիվ 088-02/Վ-017 փորձագիտական եզրակացությունը կեղծ է, սակայն վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործով վարույթը կարճվել է:

Վերոգրյալի հիման վրա 25.07.2018 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման դեմ նոր երևան եկած հանգամանքի հիմքով Տիրուհի Այվազյանի կողմից բերվել է դատական ակտի վերանայման վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2019թ. որոշմամբ մերժվել է: Վճռաբեկ բողոքում որպես նոր երևան եկած հանգամանք վկայակոչվել են թիվ 20192518 քրեական գործով ձեռք բերված նյութերը, որոնցով հիմնավորվել է, որ քաղաքացիական գործով վճռի հիմքում դրված թիվ 088-02/Վ-017 փորձագիտական եզրակացությունն ակնհայտ կեղծ է: Վերլուծելով բողոք բերած անձի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ սույն գործով առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նոր երևան եկած հանգամանքներից որևէ մեկը, քանի որ փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունն ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն հանգեցնելու հանգամանքը հիմնավորված համարելն օրենսդիրը պայմանավորել է փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացություն տալն օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված լինելու փաստով, իսկ բողոք բերած անձի կողմից նման դատավճիռ չի ներկայացվել: Ինչ վերաբերում է բողոքաբերի փաստարկներին՝ քրեական գործի նյութերը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով նոր երևան եկած հանգամանք հանդիսանալու մասին, ապա Վճռաբեկ դատարանը դրանք ևս անհիմն է համարել, քանի որ բողոք բերած անձը չի ապացուցել, որ փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելու հանգամանքը իրեն չէր կարող հայտնի լինել գործի լուծման պահին:

ՀՀ վճռաբեկ դատարանը 27.12.2019թ. որոշման հիմքում դրել է հետևյալ դիրքորոշումները.

- Վճռաբեկ բողոքում որպես նոր երևան եկած հանգամանք վկայակոչվել են թիվ 20192518 քրեական գործով ձեռք բերված նյութերը, որոնցով հիմնավորվել է, որ քաղաքացիական գործով վճռի հիմքում դրված թիվ 088-02/Վ-017 փորձագիտական եզրակացությունն ակնհայտ կեղծ է: Վերլուծելով բողոք բերած անձի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ սույն գործով առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նոր երևան եկած հանգամանքներից որևէ մեկը, քանի որ փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունն ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն հանգեցնելու հանգամանքը հիմնավորված համարելն օրենսդիրը պայմանավորել է փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացություն տալն օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված լինելու փաստով, իսկ բողոք բերած անձի կողմից նման դատավճիռ չի ներկայացվել:

- Ինչ վերաբերում է բողոքաբերի փաստարկներին՝ քրեական գործի նյութերը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով նոր երևան եկած հանգամանք հանդիսանալու մասին, ապա Վճռաբեկ դատարանը դրանք ևս անհիմն է համարել, քանի որ բողոք բերած անձը չի ապացուցել, որ փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելու հանգամանքը իրեն չէր կարող հայտնի լինել գործի լուծման պահին:

Սակայն, ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում կայացնելիս հաշվի չի առել այն հանգամանքը, որ թիվ ԿԴ1/1809/02/16 քաղաքացիական գործով ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.10.2017թ. վճռի, ՀՀ վերաքննիչ դատարանի 19.04.2018թ. որոշման և ՀՀ վճռաբեկ դատարանի 25.07.2018թ. որոշման կայացման ժամանակ դիմող Տիրուհի Այվազանը չէր կարող որպես ապացույց վկայակոչել 10.04.2017թ. տրված փորձագետի թիվ 088-02/Վ-017 եզրակացությունը կեղծ լինելը, քանի որ նշված փաստը հաստատվել է թիվ 20192518 քրեական գործի շրջանակներում 18.06.2019թ. կայացված քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ, այսինքն՝ շատ ավելի ուշ, քան կայացված դատական ակտերը:

Ինչ վերաբերում է ՀՀ վճռաբեկ դատարանի այն դիրքորոշմանը, թե փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունն ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն հանգեցնելու հանգամանքը հիմնավորված համարելն օրենսդիրը պայմանավորել է փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացություն տալն օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված լինելու փաստով, ապա նշենք, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մաս 1-ին կետով «նոր երևան եկած հանգամանքներ» եզրույթի տակ ներառել է բոլոր այն դեպքերը (փաստարկները, տեղեկությունները, ապացույցները), որոնք ներառված չեն նույն հոդվածի նույն մասի 2-րդ և 3-րդ կետերում: Օրենսդրությամբ օբյեկտիվորեն սահմանված չէ որպես «նոր երևան եկած» գնահատելի հանգամանք հանդիսացող փաստարկների, տեղեկությունների, ապացույցների սպառիչ անվանական ցանկը, ինչը յուրաքանչյուր գործով շահագրգիռ անձի կողմից այդպիսիք ներկայացվելու դեպքում դատարանի գնահատման (որոշման) խնդիրն է, միաժամանակ, օրենսդրությամբ չի բացառվում «նոր երևան եկած» իրավաբանորեն գնահատելի որևէ հանգամանքի՝ իրավասու դատարանում քննության հնարավորությունը, եթե դրա՝ դատական ակտի հիմքում օբյեկտիվորեն հաշվի չառնելը հանգեցրել է անիրավաչափ, անհիմն որոշման կայացմանը, հետևաբար՝ նաև անձի իրավունքների խախտմանը:

#### **Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.**

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին,

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի իրավակիրառ պրակտիկայի համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին խնդրահարույց է:

*Համակարգող՝*

*Լյուդվիկ Դավթյան*